

## ՆԵԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ

*Քանասիրական գիտությունների. թեկնածու*

**ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԱՌԱԿՆԵՐՈՒՄ**

Մխիթար Գոշի առակները լայնորեն հայտնի էին ողջ միջնադարում: Ըստ Մխիթարյան միաբանության 1854 թվականի հրատարակության նա գրել է 190 առակ: Այս շարքում բավականին մեծ թիվ են կազմում այն առակները, որոնցում այլաբանական կերպավորմամբ մարդկանց փոխարեն հանդես են գալիս բուսական աշխարհի ներկայացուցիչները՝ ծառերը, ծաղիկները, մրգերը, բանջարները, սերմերը: Այս բավականին մեծ թիվ կազմող բույս-կերպարները լիովին համապատասխանեցված են մարդկանց այն կերպարներին, որոնց կամեցել է ներկայացնել առակագիրը:

Առակի գրական տեսակը խիստ կենսունակ է: Այն առկա է թե՛ անտիկ աշխարհում, թե ողջ հայ միջնադարում և թե՛ մեր օրերում: 1878-ին լույս տեսած Մխիթար Գոշի առակների աշխարհաբար փոխադրությամբ հրատարակության մեջ, որն ընդգրկում է 182 գործեր, առաջաբանում Խորեն քահանա Միրզաբեգյանը գրում է. «...Բարեխիղճ նվաստը, իմաստուն ծառայն հասարակ ու աննշան, սակայն առողջամիտ և բազմափորձ մարդը ինչպես կարող էր վստահանալ յուր բռնասեր մեծին, տիրոջ կամ իշխանին զգուշացնել հայտնելով նորա ամեն մի պակասությունը: Իմաստուն մարդիկ գտան այդ հնարը միմիայն առակներով»<sup>1</sup>: Հրատարակիչը ժողովածուն նվիրել է հայ օրիորդներին և երիտասարդներին: Վերջիններիս աշխարհայացքն ընդլայնելու նպատակով հրատարակիչը ժողովածուի վերջում զետեղել է Եզովպոսի ընտիր առակներից և նրա համառոտ կենսագրությունը:

Մխիթար Գոշը ևս իր առակները գրել է հայ երիտասարդներին, հայ մարդուն առհասարակ առավել կատարյալ տեսնելու ձգտմամբ: Առակագրի այդ նպատակը պարզորոշ երևում է «Դատաստանագրքի» մի քանի բացատրություններից:

Առակագրին և օրենսդրին մեծապես անհանգստացնում է, որ մարդկանց մեջ ուժեղացել է չարությունը և զգացվում է սիրո և դիմացինին վշտակցելու պակաս: Ծուլության պատճառով մարդիկ շեղվում են օրենքներից, որի հետևանքով կյանքի պայմանները դառնում են անտանելի, ու անհրաժեշտ է նրանց վերադարձնել օրենքներին ենթարկվելու, որը նման է մարդուն քնից արթնացնելուն. «Եւ երկրորդ՝ զի զքնաւորականն ի մեզ ւարէնս չարութիւնն շիջոյց, եւ զկատարելութիւնն անկատարութիւն հոգւոյ, զվշտակցութիւն սիրոյ՝ ատելութիւն:

Երրորդ զի ի հեղգութենէ անվարժ եղեալ Աւրինաց, եւ Մարգարէից, եւ Աւետարա-

<sup>1</sup> **Մխիթար Գոշ**, Ողոմպիանու և Եզովպոսի ընտիր առակները, թարգմանությունը Խորեն քահանայի Միրզաբեգյանի, Բագու, 1878, Յառաջաբան, էջ Ա:

նին, յորոց զարութենէ անկարացաք ընտրել զիրս դատաստանի, զոր արժան վարկաք իբր ի քնոյ զարթուցանել ի ձեռն գրոց դատաստանի»<sup>2</sup>:

Մխիթար Գոշի առակներն ունեն ոչ միայն դաստիարակչական, բարոյախրատական, այլև ճանաչողական մեծ արժեք: Այդ առակներից իմանում ենք, թե հայկական միջավայրում ո՞ր բույսերն էին ծանոթ ու ընտանի, այլապես ընթերցողը երբեք չէր կարող հասկանալ, թե ինչի մասին է խոսքը: Առակագրի մոտ հանդիպում են հետևյալ ծառերի և թփերի անունները՝ մորենի, նուռ, թուզ, խաղողի որթ, արմավենի, դժնիկ, մայրի, խնձոր, տանձ, թթենի, ձիթենի, սալոր, դամոն, ծիրան, դեղձ, սերկնիլ, ընկույզ, հունապ, սոսի, բամբակենի, նարինջ, կիտրոն, սարդենի, նոճի, հաճարի, փիճի, նշենի, կասկենի, կաղնի, արքայակաղնի, ցարասի, հավամրգի:

Այս ծառերն առակներում ունեն իրենց հատկություններին հատուկ բնութագրեր: Մի առակում ատյանի ժամանակ դեղձենին քննադատում է սերկնիլին ասելով, թե տեսքով դեղին է և մարդու համար դժվարձաշակելի: Իսկ ինքը բարեստեհիլ է և դյուրաճաշակ: Սերկնիլը պատասխանում է, թե դեղձենին պատրիչ է, արտաքուստ զայթակղում է, սակայն որովայնում բազում վնասներ է գործում: Մինչդեռ ինքը բուժում է հիվանդների ցավերը<sup>3</sup>: Արդի բժշկությունից էլ հայտնի է, որ սերկնիլը իր բուժիչ հատկություններով գերազանցում է առավել բարեստեհ դեղին: Կարևորը առակի եզրակացությունն է, համաձայն որի դեղձը կեղծավորներն են, ովքեր մեղադրում են ճշմարիտ մարդկանց, իսկ իրենց ներկայացնում որպես բարեհույս ու վշտակից: Մինչդեռ ճշմարտախոս մարդկանց խոսքերն են հոգու դեղ և բառնում են մարդկանց հիվանդությունները:

Մի առակում տնկիները վիճում են, թե իրենցից ով է արժանի թագավոր լինելու: Վիճող կողմերից են արմավենին, խաղողի որթը, թզենին, նույնիսկ դժնիկը: Հաղթում է արմավենին, որը «բարձր է հասակաւ և քաղցր է պտղովք»<sup>4</sup>: Նա ասում է, որ ինքը կարգ ու կանոն կհաստատի և ամեն մի տունկի պալատում կտա արժանի պաշտոն: Խաղողի որթը կկարգվի զինեպետ, թուզը՝ հյուպատոս, դժնիկը դահճապետ, նոնենին՝ բժշկապետ, իսկ մնացած ծառերը այլ դեր կունենան: Մայրի ծառը կօգտագործվի շինարարության մեջ, անտառի ծառերը որպես վառելափայտ, մորենին բանտում և մյուսները «յիւրաքանչիւր գործ»<sup>5</sup>:

Մի շարք առակներում բույսերի համային հակադիր հատկություններն օգտագործվում են հակամարտ ուժեր ներկայացնելու համար: Նոնենին ու թզենին ցանկանում են միմյանց նկատմամբ սեր ունենալ և իրենց քաղցրությամբ հավասարվել: Սակայն նոան թթվությունը տաղտկացնում է թզենուն և «լուծաւ դաշինքն»<sup>6</sup>: Շատ խորիմաստ է առակի բարոյախոսական եզրահանգումը. «Բմաստս տայ այս առակ, նախ փորձել սիրելեաց զմիմեանց բարս, զի ամենայնիւ նման միմեանց իցեն, ապա թե ոչ դիւրաւ լուծանելի իցե

<sup>2</sup> Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, էջ 3:

<sup>3</sup> Մխիթար Գոշ, Առակք, Վենետիկ, 1854, էջ 17:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 12:

սեր»<sup>7</sup>:

Այն բույսերը, որոնք մարդու կյանքում ունեն բացառիկ դեր հենց այդ իմաստով էլ դրսևորվում են Մխիթար Գոշի առակներում: Առակագիրը իր պատումի եզրահանգումը հաճախ օգտագործում է քրիստոնեական կրոնի մարդասիրական ուղղվածությունն առավել տեսանելի ձևերով հավատացյալի մտածողության մեջ ամրապնդելու համար: Թթենուն և ձիթենուն ներկայացնող առակում նախապատվությունը տրվում է ձիթենուն: Թթենին խորհրդանշում է թագավորական տոհմը, իսկ ձիթենին քահանայականը: Եզրակացության մեջ ասվում է, թե թագավորական ազգը նման է անցողիկ թթենուն, իսկ քահանայական ազգը թեպետ աղքատ է, սակայն արժանապատիվ է<sup>8</sup>: Չմոռանանք, որ ձիթենին քրիստոնեական կրոնի սրբացված բույսերից է: Նույն կերպ գերազանց ձևով են ներկայացվում խորհրդաբանության մեջ այլաբանական մի շարք իմաստներ ունեցող խաղողի որթը, խնձորը և ցորենը:

Ձիթենու վերաբերյալ «Մուրբ Գրոց բառարանում» կա շատ ընդարձակ բացատրություն, որը հաճախ հղումներ ունի Աստվածաշնչի և Առաքյալների թղթերի համապատասխան հատվածներին: Ձիթենին ներկայացվում է որպես Աստվածաշնչում հիշատակվող հնագույն ծառերից մեկը: Եվ ջրհեղեղից սկսած այն նշանակ է խաղաղության: Ըստ որում ձիթենին ամենից ավելի շատ հիշատակված է հույն և լատինացի մատենագիրների երկերում<sup>9</sup>: Մաղմոսներում հիշատակվում է ձիթենու երկարակյաց և մշտադալար լինելը, որը նշան է առույգ և երկայնամիտ բարեպաշտության<sup>10</sup>:

Մխիթար Գոշը տիպաբանական ձևով դասակարգել է բույս-անձնավորումներին: Նախ ծառեր, ապա ծաղիկներ, հետո սերմեր, ապա բանջարանոցային բույսեր: Անցու-

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>9</sup> «Գիրք Պիտոյից» երկի հինգերորդ հատվածը կոչվում է «Մահման ներբողենի»: Նրանում ներբողյանի առարկա է համարվում տունկը, և որպես օրինակներ, բերվում են ձիթենին ու խաղողի որթը: Նույն հատվածի երկրորդ ենթաբաժինը կոչվում է «Ներբողեն ձիթենոյ», ուր մանրամասն թվարկվում են այդ բույսի առավելություններն, որոնք էլ «եկեալ բերե ըստ ասկիցս իւրոց զամենահաճոյ եւ զիրաւալի գովաբանութիւն», (տե՛ս Գիրք Պիտոյից, Աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Երևան, 1993, էջ 104):

<sup>10</sup> Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 322: Ձիթենին խորհրդանշում է խաղաղություն, հաղթանակ, ուրախություն, առատություն, մաքրություն, ողջախոհություն և անմահություն: Այն օրհնված ծառ է անտիկ, հին հրեական, քրիստոնեական և մահմեդական ավանդություններում: Ըստ հունական առասպելների՝ ձիթենին ստեղծվել է ռազմի աստվածուհի Աթենասից, որպեսզի իրավունք տրվի քաղաքին տալու Աթենասի անունը: Ձիթենու ճյուղերից հյուսված պսակը Հունաստանում համարվում էր բարձրագույն պարգև: Այդ պսակները հանձնում էին օլիմպիական խաղերում հաղթողներին: Ծառի բերքառատությունը դառնում է բարգավաճման խորհրդանիշ: Հարսներն իրենց զգեստներին ամրացնում էին ձիթենու ճյուղեր կամ դրանք տանում էին ձեռքներին բռնած, որը խորհրդանշում է անմեղությունը: Ձիթենին խաղաղության խորհրդանիշ դարձավ Հին Հռոմում, ուր ենթակա երկրների դեսպանները բերում էին ձիթենու ճյուղեր՝ ի նշան հնազանդության: Արևմտյան արվեստում ձիթենու ճյուղը դարձել է այլաբանական նշանակ խաղաղության, միաբանության և իմաստության պատկերման: Վաղ շրջանի քրիստոնյաները ձիթենու ճյուղերն օգտագործում էին որպես տառապանքի խորհրդանիշ: Մահմեդական կրոնում ձիթենին Կյանքի ծառն է, Մարգարեի և Աբրահամի խորհրդանիշը, դրախտի երկու արգելված ծառերից մեկը: Հապոնիայում ձիթենին խորհրդանիշն է բարեկամության և հաջողության, Չինաստանում՝ հանգստության և անվտանգության (տե՛ս Энциклопедия символов, Москва, 2005, էջ. 746-747):

մը բույսերի մի տեսակից մյուսին առակագիրը ձևակերպում է յուրովի: Օրինակ՝ «Համասեռք այսմ զանց արարաք, եկեսցուք ի սերմանս և ի բանջարս»<sup>11</sup>: Ավարտելով սերմերի բաժինը և անցնելով բանջարանոցային բույսերին՝ առակագիրը գրում է. «Բաւական է այսմ տեսակի ասացեալքս»<sup>12</sup>:

Ճիշտ և ճիշտ Դավիթ Սալաձորցու «Գովասանք ծաղկանց» տաղի նման առակագիրը թվարկում է ծաղիկներն իրենց հատկանիշներով՝ նրանց միջոցով պատկերելով մարդկային վարքագծի տարբեր դրսևորումները: Մի առակում ներկայացված են մանուշակը և շուշանը: Առաջինը շուտ է ծաղկում, և մարդիկ հիանում են նրանով, ու նա ցանկանում է բարեկամություն անել շուշանի հետ: Շուշանը խնդրում է սպասել մինչև ինքն էլ ծաղկի և միասին դառնան հիացմունքի առարկա: Սակայն մանուշակը չի սպասում, ու մինչ շուշանը կծաղկեր, մանուշակը գոսանում է: Առակի մեկնաբանության մեջ մանուշակը ներկայացվում է որպես սնափառ մարդկանց խորհրդանիշ, ովքեր ձգտում են ունայն փառքի<sup>13</sup>:

Հետաքրքիր հոգևոր խորհուրդ ունի իր մեջ ԼԳ առակը: Անասնակերի համար պիտանի բույսերը՝ գնդածաղիկը, կորնգանը, խուրձը, կապույտ առվույտը, սեզը և սրանց նմանները ծաղրում են ցինկ ծաղկին, որը շարունակ դեղնում է, մինչդեռ իրենք շատ զվարճալի են ապրում: Սակայն ցինկը հիշեցնում է, որ սուր գերանդին հնձելու է բոլորին, ահա այդ հիշելով ինքը զարհուրած դեղնում է: Առակը ուղղված է այն մարդկանց, ովքեր մոռանալով իրենց մահկանացու լինելը՝ խաբվում են երկրային վայելքներով, մոռանալով վերջին դատաստանի մասին: Այդ դատաստանը խորհրդանշում է «սուր գերանդին»:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում բույսերի անունները բացատրելիս հեղինակները շարունակ դիմում են Մխիթար Գոշի առակներին: Սա նա ապացուցում է, որ առակագիրը որպես տիպ-կերպար պահպանում է բույսին հատուկ հատկանիշը, որով այն տարբերվում է մյուսներից, որով այն ճանաչելի է: Բերենք մի քանի օրինակներ:

1) «Ցինգ կամ ցինկ - դեղին ծաղիկ դաշտի և յափն գետոյ»: Հետո բերվում է Մխիթար Գոշի առակից հետևյալ հատվածը. «... Եւ լուեալ պատասխանեաց, վասն մեր սուրք սրին գերանդեաց, իսկ ես խոկալով այսոսիկ զարհուրեալ դեղնիմ- Մխ. առակ. ԼԳ»<sup>14</sup>:

2) «Յունապ - Պտուղ կարմիր ի չափ պտղոյ փշատի... որոյ մեջն է իբր ալիւր անոյշ, իսկ յունապն մատ և ծառն երկոցունց փշուտ այլ և այլ օրինակաւ, փշատին է ծառ ուղղաբերձ և ուղիղ շառաւիղօք, իսկ յունապին թուփ կարճ և խորտաբորտ ոստովք»: Առակի հատվածը՝ «Յանմտից ոք եհար գյունապի՝ կարծելով զնա դժնիկ - Մխ. առակ. ԺԸ»<sup>15</sup>:

3) «Հաւամրգի - բոյս նման մրտի, յորմէ կազմի աւել, և սերմն նորա լինի միրգ հա-

<sup>11</sup> Մխիթար Գոշ, Առակք, էջ 41:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>14</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբաօր Շ. Գաբրիէլ Ավետիքեան, Շ. Խաչատրոյ Սիրմէլեան, Շ. Մկրտիչ Աւգերեան, հ. II, Հ-Ֆ, Վենետիկ, 1837, էջ 913:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 375:

ւուց, այսինքն ուտելի ամենայն թռչնոց - Միս. առակ.»<sup>16</sup>:

4) «Ցարասի - թուփ մանրատերև, յորմէ աւել կազմի: Բողոք առ միմեանս կալան ցարասի և հաւամբգի, ասելով զիս թո՛ւ նման մեզ լինելով մրտի... մեք անարգ լինիմք գործիք, զաւելորդս տանց և գոեհից մաքրելով - Միս. առակ.»<sup>17</sup>:

5) «Արքայակաղնի - կաղնի թագաւորական, ծառն արքայական կաղնոյ (որ ըստ ոմանց է ընկուզի և ըստ այլոց նշենի): Մեծաբանեալ սնափառէր կաղնի ասել զինքն թագաւորագն, իսկ արքայակաղնի ոչ ժուժեալ յանդիմանական վարեցաւ առ նա բանիւ - Միս. առակ. ԻԴ»<sup>18</sup>:

6) «Դամոն - Ազգ սալորոյ, մանաւանդ Դամասկեանն կոչեցեալ: Սալոր և դամոն և ծիրան ամբաստանեցան, թե ընդէ՞ր զատամունս հարուն- Միս. առակ.»<sup>19</sup>:

7) «Կասկենի - Ծառ կաստանայի, որ յայլ լեզուս շփոթի և ընդ կաղին, նուշ, ընկոյզ: Նշենին քաղցր... նեղեալ ի դառնութենէ եղբօրն, արար իւր բարեկամ և եղբայր զկասկենի, բարոյակից զնա գտեալ ըստ երկուց որակաց- Միս. առակ.»<sup>20</sup>:

Մխիթար Գոշի առակներում տեսնում ենք այն սերմերը, որոնք ընդունված էին հայերի կենցաղում որպես ուտելի: Դրանք են գարի, ցորեն, կորեկ, հաճար, սիսեռ, բակլա, կտավատ, լոբի, ոլոռ, խաշխաշ:

Մի առակում գարին, կորեկը փառասիրությունից դրդված փորձում են պերճ երևալ, իսկ ցորենը խոնարհաբար լռում է, և արքան այդ տեսնելով գերադասում է ցորենին. «Նշանակէ առակս ոչ այլ իւիք զօրութեամբ անդամ լինել Քրիստոսի, քան խոնարհութեամբ, ըստ որում և Տէր եմուտ ի բնութիւնս ուսման աղագաւ»<sup>21</sup>:

Բանջարանոցային բույսերից Գոշի առակներում հանդես են գալիս ճակնդեղը, սեխը, ձմերուկը, թաղթը, շաղգամը, ստեպդինը, սամիթը, գինձը, չամանը, փեզենան, սպանխը, սոխը, սխտորը, վարունգը, շամամը, կաղամբը:

Հետաքրքիր փաստ: Առակագիրը բույսերի տիպական կերպավորումն այնքան բնական է համարում իր ընտրած ժանրում, որ ավարտելով բանջարանոցային բույսերի փոքրիկ պատմությունները, վերջում գրում է. «Լռեսցեն և այս տեսակս, անցցուք և յայլ ինչ»<sup>22</sup>: Բացի վերոհիշյալ բույսերից կերպարային անձնավորումը ներկայացնելը, հեղինակը ներկայացնում է նաև նրանց կիրառական հատկանիշները մարդու առօրյայում: Հնագույն ժամանակներից հայտնի են սոխի և սխտորի բուժիչ հատկանիշները, սակայն դրանց չափից ավելի գործածելու դեպքում, վերջիններս վերածվում են չարիքի: Այդ մասին են պատմում ԾԳ և ԾԴ առակները. «Զխստոր Գալիանոս թիրակէ կոչէր շինականաց, և լուեալ մշակի միոյ, առեալ եկեր կայթիւ և խելագարեալ կուրացաւ:

Դատումն առակիս այս է, զի իմաստունք զցասումն մարդկան բուժիչ ասեն երկիւղի

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 910:

<sup>18</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Ա-Կ, Վենետիկ, 1836, էջ 385:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 593:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 1059:

<sup>21</sup> **Մխիթար Գոշ**, Առակք, էջ 42:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 59:

և թե անհմտաբար անչափանան, կուրանան հոգւով»<sup>23</sup>:

Բույսերի միջոցով էլ առակագիրը հաստատում է իր միապետական հայացքները: Բույսերի թագավորի կողմից ճակնդեղը նշանակվում է բանջարանոցի բույսերի հրամանատար, որովհետև ողջ ամառ այն կերակուր էր մարդկանց համար: Սրա դեմ բողոքում են մյուս բանջարանոցային բույսերը՝ սեխը, ձմերուկը, թաղթը, շաղգամը և ստեպոլինը՝ նշելով ճակնդեղի թերությունները: Եվ առակի բուն պատումի և թե բարոյախոսական եզրահանգման մեջ հեղինակը, լինելով կարգ ու կանոնի կողմնակից, ասում է. «Եւ գիտացեալ արքայի նոցա, տանջել զնոսա հրամայեաց, եթէ զի՞ յանդգնիք ընդդէմ իշխանի, զի հնազանդել պարտիք և ոչ քննիչք լինել, զի մի՞ անկարգութիւն լիցի:

Ցածուցանէ առակս զյանդգնութիւն մարդկան, որ դատիչք լինին վարուց իշխանաց և բազում պատճառս չարեաց դնեն նոցա և ոչ իմանան, թէ այնոքիւք լուծանին կարգք իշխանութեանն, մինչև ի բնաւիցն ժամանէ իշխանն Աստուած»<sup>24</sup>:

Իր առակներում հեղինակը բազմիցս կանգ է առնում որոշ բույսերի առավելությունների վրա, նշում նրանց բազմատեսակ օգտակար հատկանիշները: Բույսերին ներկայացնող առակները երևան են հանում 12-13-րդ դարի հայ առակագրի խոր ծանոթությունը մարդկային հոգեբանությանը, մարդու վարքագծին, միաժամանակ նրա մտածված նպատակամղումը առակներով ևս առավել տանելի դարձնել մարդկային կյանքը՝ հնարավորինս ուղղելով նրա թերությունները:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 51-52: